ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նոր Խաչակապ համայնք, հասցե գ.Նոր Խաչակապ,

Հեռախոս՝ 093207656
2020թ.«04» հունիսի
N 129

ՀՀ Լոռու մարզպետ
պ-ն Ա.Ղուկասյանին

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի ավագանու թիվ 08-09 որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Մ.ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նոր Խաչակապ համայնք, հասցե գ Նոր Խաչակապ ,
հեռ.093-20-76-56 էլ. փոստ՝ norkhachakap.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«01 » հունիսի 2020թ. N 08

ԽԱՉԱՏՈՒՐ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.08515 ՀԱ, 06-083-0206-0011 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԲԱ-ՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով Խաչատուր Վոլոդյայի Գրիգորյանի համաձայնությունը՝ գնման նախապատվության իրավունքով գնելու Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի համայնքային սեփականություն ճանաչված, Վանաձորյան խճուղղի թիվ 3 փոստային հասցեով, 06-083-0206-0011 ծածկագրով, 0.08518 հա հողամասը, օպերատորի սենյակը և ծածկարանը՝

Նոր Խաչակապ համայնքի ավագանին որոշում է .

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված՝ /անշարժ գույքի գրանցման թիվ 26032020-06-0031 վկայական/ այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, Խաչատուր Վոլոդյայի Գրիգորյանի կողմից ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի համայնքային սեփականություն ճանաչված,Վանաձորյան խճուղղի թիվ 3 փոստային հասցեով, 06-083-0206-0011 ծածկագրով, 0.08518 հա, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, բնակավայրերի հողերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասից 0,0135863 հեկտարը կադաստրային արժեքով՝ 30162 ՀՀ դրամով, յուրաքանչյուր 1 քմ 222 ՀՀ դրամով, 0,0715937 հեկտարը կադաստրային արժեքի եռապատիկով՝ 476814 ՀՀ դրամով, յուրաքանչյուր 1 քմ 666 ՀՀ դրամով և ինքնակամ կառուցված 06-083-0206-0011-001 ծածկագրով արտաքին

չափերով՝ 7,863 քմ մակերեսով օպերատորի սենյակը՝ 38922 դրամով, 06-083-0206-0011-002 ծածկագրով արտաքին չափերով՝ 128 քմ մակերեսով ծածկարանը՝ 633600 ՀՀ դրամով, ընդամենը՝ 1179498 ՀՀ դրամ արժեքով գնման նախատվության իրավունքով, ուղղակի վաճառքով Խաչատուր Վոլոդյայի Գրիգորյանին օտարելու առաջարկությանը:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Սեմյոն Սիմոնյան			
Ամբակում Մալխասյան			
Գրիգորի Չալաբյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նոր Խաչակապ համայնք, հասցե գ. Նոր Խաչակապ ,
հեռ.093-20-76-56 էլ. փոստ՝ norkhachakap.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 01 » հունիսի 2020թ. N 09

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Նոր Խաչակապ համայնքի ավագանին որոշում է .

Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի <<Համայնքային սեփականության ամենամյա գույքագրման արդյունքների հաստատման մասին>> թիվ 32 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ հիմնական միջոց հանդիսացող գույքի ցանկում ավելացնել 1 ուղղահայաց ճոճանակ՝ 2 տեղանոց,1 պտտվող ճոճանակ՝ 5 տեղանոց, 1 սղարան՝ 325000 (երեք հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ արժողությամբ,գույքի ցանկում ավելացնել նաև մետաղական կոնստրուկցիայով պատրաստված 3 խաչ, երկաթից պատրաստված 2 նստարան:

Համայնքի ավագանու անդամներ	*կողմ*	*դեմ*	*ձեռնպահ*
Սեմյոն Սիմոնյան			
Ամբակում Մալխասյան			
Գրիգորի Չալաբյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՄԵԼԻՔՅԱՆ